



ԱՍՏՎԱԾԱԾՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ*

ՀԱՇՏՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ՝ ՀԱՒԱՏՈՎ

(Հոովմ. Ե 1—11)

Ուրեմն, հաւատով արդարացուած, խաղաղութիւն ունենանք Աստուծոյ հետ մեր Տէր Յիսուս Քրիստոսով, որի միջոցով էլ կարողացանք, հաւատով, մերձեցնալ այդ շնորհին, որի մէջ և կանք ու պարծենում ենք Աստուծոյ փառքի յոյսով: Եւ ոչ միայն այսքանը. այլեւ պարծենում ենք մեր նեղութիւնների մէջ եւս, քանզի գիտենք, որ նեղութիւնները համբերութիւն են բերում, համբերութիւնը՝ փորձ, փորձը՝ յուս: Յույսը երբեք չի ամաչեցնում, որովհետեւ Աստուծոյ սէրը սփռուած է մեր սրտերում սուրբ Հոգու միջոցով, որ տրուեց մեզ. որովհետեւ, մինչդէռ տկար էինք, Քրիստոս ճիշտ ժամանակին, մեզ՝ ամբարիշտներին համար մտաւ. որովհետեւ արդարի համար հագիւ թէ մէկը մտնի, բայց բարու համար թերեւս մէկը յանդգնի մտնել: Աստուած իր սէրը մեզ հանդէպ յայտնեց նրանով, որ, մինչդէռ մեղաւոր էինք, Քրիստոս մեզ համար մտաւ: Այժմ, որ մենք արդարացուած ենք նրա արեամբ, որչա՛ր եւս առանել նրանով փրկուած պիտի լինենք այդ բարկութիւնից. որովհետեւ, եթէ, մինչ

* Մամուլի տակ է և շուտով լույս կտեսնի Նոր Կտակարանի ամբողջական թարգմանության արևելահայերեն նոր հրատարակությունը:

«Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում որոշ հատվածներ սույն թարգմանությունից: Թարգմանությունը կատարվել է 1895 թվականին Կ. Պոլսում տպագրված Աստվածաշնչի գրաբար օրինակի վրայից՝ համեմատությամբ հունարեն բնագրերի: Թարգմանության ընթացքում օգտագործվել են նաև Նոր Կտակարանի ֆրանսերեն և անգլիերեն վերջին, գիտական հրատարակությունները:

Նոր Կտակարանի արևելահայերեն սույն թարգմանությունը կատարել են, Վեհափառ Հայրապետի հրամանով, հոգևոր ճեմարանի դասախոսներ Արթուր Հատիտյանը, Պարզև Ծախրազյանը և Մամվել Անթուրյանը:

թշնամի էինք, հաշտուեցինք Աստուծոյ հետ նրա Որդու մահուամբ, որչա՛փ էս առաւել, երբ հաշտուած ենք, փրկուած պիտի լինենք նրա կեանքով: Եւ ոչ միայն այսքանը, այլ նաեւ պարծենում էլ ենք Աստուծով մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցով, որով եւ հաշտութիւնն իսկ ընդունեցինք:

ՄԷԿ ՄԱՐԴՈՎ՝ ՄԵՂՔ, ՄԷԿ ՄԱՐԴՈՎ՝ ՓՐԿՈՒԹԻՒՆ

(Հոովմ. Ե 12—21)

Քանի որ, ինչպէս մէկ մարդով մեղքը աշխարհ մտաւ, եւ մեղքով էլ՝ մահը, այնպէս էլ բոլոր մարդկանց մէջ տարածուեց մահը, որովհետեւ բոլորը մեղանչեցին. բաւզի մինչեւ օրէնքը աշխարհում մեղք կար. բայց մեղքը մեղք չի համարում, ուր չկայ օրէնք. սակայն մահը թագաւորեց Ադամից մինչեւ Մովսէսը նոյնիսկ նրանց վրայ, որոնք Ադամի յանցանքի նմանութեամբ յանցանք չգործեցին, Ադամի, որը օրինակ է նրան, որ գալու էր: Բայց շնորհն այնպէս չէ, ինչպէս յանցանքը. որովհետեւ, եթէ մէկի յանցանքով շատեր մեռան, որչա՛փ էս առաւել Աստուծոյ շնորհները եւ պարգեւները մէկ մարդու՝ Յիսուս Քրիստոսի շնորհով աւելացան շատերի մէջ: Եւ այս պարգեւները այնպէս չեն, ինչպէս որ է մէկ մարդու մեղքի հետեանքը. որովհետեւ մէկի մեղքի դատաստանը դատապարտութիւն բերեց, իսկ գործուած շատ մեղքերի համար շնորհը համարուեց որպէս արդարութիւն. որովհետեւ, եթէ մէկի յանցանքով մահը թագաւորեց միայն այդ մէկով, որչա՛փ էս առաւել նրանք, որ շնորհի առատութիւն և արդարութեան պարգեւներ կը ստանան, կեանքի մէջ պիտի թագաւորեն միակ Յիսուս Քրիստոսի միջոցով: Ապա ուրեմն, ինչպէս մէկի յանցանքով բոլոր մարդիկ դատապարտութեան մատնուեցին, նոյնպէս եւ մէկի արդարութեամբ բոլոր մարդիկ պիտի հասնեն կեանքի արդարութեան. որովհետեւ, ինչպէս մէկի անհնազանդութեամբ մեղաւորները բազում եղան, նոյնպէս եւ մէկի հնազանդութեամբ արդարները բազում պիտի լինեն: Բայց օրէնքը մէջտեղ ընկաւ, որպէսզի յանցանքները բազմանան. որովհետեւ, ուր որ մեղքը շատացաւ, շնորհն առաւել էս շատացաւ: Ինչպէս որ մեղքը թագաւորեց մահուան մէջ, նոյնպէս եւ շնորհը պիտի թագաւորի արդարութեամբ յաւիտենական կեանքի մէջ մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցով:

ՔՐԻՍՏՈՍՈՎ՝ ՆՈՐ ԿԵԱՆՔ

(Հոովմ. Զ 1—11)

Իսկ արդ՝ ի՞նչ ասենք. մնա՞նք մեղքի մէջ, որպէսզի շնորհը բազմանայ: Քա՛ւ լիցի: Մենք, որ մեռանք մեղքի պատճառով, ինչպէ՞ս տակաւին ապրենք նրա մէջ: Կամ չգիտէ՞ք, թէ մենք բոլորս, որ մկրտուեցինք Յիսուս Քրիստոսով, նրա մահով է, որ մկրտուեցինք: Մկրտութեամբ թաղուեցինք նրա հետ մահով, որպէսզի, ինչպէս որ Քրիստոս մեռելներից յարութիւն ստաւ Հօր փառքով, նոյնպէս եւ մենք քայլենք նորոգ կեանքով. որովհետեւ, եթէ նրա մահուան նմանութեամբ տնկակից եղանք նրան, պիտի լինենք նաեւ նրա յարութեան նմանութեամբ: Այս իմացէք, որ մեր միջի հին մարդը խաչակից եղաւ նրան, որպէսզի քայքայուի մեղքի մարմինը, եւ այլեւս մենք չծառայենք մեղքին, որովհետեւ, ով մեռնում է, արդարացուած է մեղքից: Իսկ եթէ մեռանք Քրիստոսի հետ, հաւատում ենք, թէ նրա հետ էլ կ'ապրենք: Գիտենք, թէ

Քրիստոս մեռելներից յարութիւն առած լինելով՝ այսուհետեւ չի մեռնի, եւ մահը նրան այլեւս չի տիրի. որովհետեւ, նա, որ մեռաւ, մեղքի համար մեռաւ մէկ անգամ, եւ նա, որ կենդանի է, կենդանի է Աստուծոյ համար: Նոյնպէս եւ դուք ձեզ մեռած համարեցէք՝ մեղքի, և կենդանի՝ Աստուծոյ համար՝ Քրիստոս Յիսուսով, մեր Տիրոջով:

ԱԶԱՏԱԳՐՈՒՄ ՀՈԳՈՒ ՄԻՋՈՑՈՎ

(Հոովմ. Ը 1—11)

Եթէ այդպէս է, ոչ մի դատապարտութիւն չկայ նրանց, որոնք Քրիստոս Յիսուսի մէջ են. որովհետեւ Քրիստոս Յիսուսով կեանք տուող հոգու օրէնքը ինձ փրկեց մեղքի եւ մահուան օրէնքից. քանզի, ինչ որ անհնար էր օրէնքի համար, որն անկարող էր դառնում մարմնի պատճառով, Աստուած այն արեց. առաքեց իր Որդուն մեղանշական մարմնի մեանութեամբ եւ մեղքի համար ու մարմնի մէջ դատապարտեց մեղքը, որպէսզի օրէնքի արդարութիւնը կատարուի մեր մէջ, մեր, որ ոչ թէ ըստ մարմնի ենք ընթանում, այլ՝ ըստ հոգու. որովհետեւ նրանք, որ ըստ մարմնի են, մարմնին են խորհում, իսկ նրանք, որ ըստ հոգու են, հոգունը. քանի որ մարմնի խորհուրդը մահ է, իսկ հոգու խորհուրդը՝ կեանք եւ խաղաղութիւն. քանզի մարմնի խորհուրդը թշնամի է Աստուծուն, որովհետեւ չի հնազանդում Աստուծոյ օրէնքին. եւ նա ոչ իսկ կարող է. որովհետեւ նրանք, որ մարմնի իշխանութեան տակ են, չեն կարող հանելի լինել Աստուծուն: Բայց դուք մարմնի իշխանութեան տակ չէք, այլ՝ հոգու, եթէ Աստուծոյ Հոգին բնակուած է ձեր մէջ: Ապա եթէ մէկը Քրիստոսի Հոգին չունի, նա նրանը չէ: Իսկ եթէ Քրիստոս ձեր մէջ է, ապա մարմինը մեռած է մեղքի համար, եւ հոգին կենդանի է արդարութեան համար: Եթէ ձեր մէջ բնակուած է նրա Հոգին, ով յարութիւն տուեց Յիսուսին մեռելներից, ապա եւ, ով որ յարութիւն տուեց Քրիստոսին մեռելներից, կը կենդանացնի ձեր մահկանացու մարմինները ձեր մէջ բնակուող իր Հոգով:

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՄԻՐՈՅ ՅԱՂԹԱԿԱՆ ԵՐԳ

(Հոովմ. Ը 31—39)

Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ: Նա, որ իր Որդուն իսկ չխնայեց, այլ մեր բոլորի համար մահուան մատնեց նրան, ինչպէ՞ս մեզ չի շնորհելու ամենայն ինչ նրա հետ մէկտեղ: Ո՞վ է, որ մեղադրելու է Աստուծոյ ընտրեալներին. Աստուած է, որ արդարացնում է: Իսկ արդ՝ ո՞վ է, որ դատապարտելու է. Քրիստոս Յիսուս. նա, որ մեռաւ, մահաւանդ որ յարութիւն իսկ առել է. եւ Աստուծոյ աջում է եւ բոլորիս բարեխօս իսկ է մեզ համար: Արդ՝ ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց. նեղութի՞ւնը, թե՞ անձկութիւնը, թե՞ հալածանքը, թե՞ սովը, թե՞ մերկութիւնը, թե՞ վտանգները, թե՞ սուրբ, ինչպէս գրուած էլ է. «Կեզ համար ենք մեռնում ամբողջ օրը. համարուեցինք որպէս ոչխար սպանդի համար»: Բայց այս բոլորի մէջ առաւել ենք յաղթում նրա միջոցով, ով սիրեց մեզ. որովհետեւ վստահ են, թէ ո՛չ մահը եւ ո՛չ կեանքը եւ ո՛չ հրեշտակները եւ ո՛չ իշխանութիւնները եւ ո՛չ այլ բաներ, որ այժմ կան, եւ ո՛չ գալիքները եւ ո՛չ զօրութիւնները, ո՛չ էլ բարձրութիւն եւ ո՛չ խորութիւն եւ ո՛չ մի ուրիշ արարած չի կարող բաժանել մեզ Աստուծոյ այդ սիրուց, որ կայ Քրիստոս Յիսուսով՝ մեր Տիրոջով:

ՕՐՀՆԵՐԳ ԱՍՏՈՒԾՈՅ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ

(Հոովմ. ԺԱ 33—36)

Օ՛, խորութիւն Աստուծոյ հարստութեան եւ իմաստութեան եւ գիտութեան: Ինչքա՛ն անքննելի եւ նրա դատաստանները, եւ անզննելի՛ նրա նաւապարհները. որովհետեւ ո՛վ ինացաւ Տիրոջ միտքը, կամ ո՛վ խորհրդատու եղաւ նրան, կամ ո՛վ նրան փոխ տուեց, որ փոխարէնը առնի նրանից. քանի որ նրանից եւ նրանով եւ նրանն է ամէն բան: Նրան փառք յաիտեանս: Ամէն:

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՍԷՐ

(Հոովմ. ԺԲ 9—21)

Սէր՝ առանց կեղծիքի. ատելով չարը՝ ընթանալ բարու ետեւից. եղբայրասիրութեան մէջ՝ միմեանց հանդէպ գթասիրտ. պատիւ տալու մէջ՝ առաջ նետուել. ջանասիրութեան մէջ՝ ոչ վեճերոտ. հոգով եռացէք. Տիրոջը ծառայեցէք. յոյսով ուրախացէք. նեղութեան համբերեցէք, աղօթքի ստեպ կանգնեցէք. հաղորդակից եղէք սրբերի կարիքներին. հետամուտ եղէք հիւրասիրութեան: Օրհնեցէք ձեզ հալածողներին. օրհնեցէք եւ մի՛ անհծէք. ուրախացողների հետ ուրախանալ. լացողների հետ լալ. համախոհ եղէք միմեանց. մի՛ մեծամտացէք, այլ յօժար եղէք խոնարհ բաներին. դուք ձեր մէջ՝ իմաստուն մի՛ եղէք. մէկի չարի փոխարէն չար մի՛ հատուցէք. խորհեցէ՛ք բարին՝ բոլոր մարդկանց առաջ. ինչ չափով հնարաւոր է ձեզ համար, բոլոր մարդկանց հետ խաղաղութիւն պահեցէք. ինքներդ վրէժխնդիր մի՛ եղէք, սիրելիներ՛, այլ տեղի տուէք բարկութեանը. որովհետեւ գրուած է. «Իմն է վրէժխնդրութիւնը, եւ ես կը հատուցեմ»,—ասում է Տէրը. այլե՛ «Եթէ քաղցած է քո թշնամին, հաց տուր նրան, եւ եթէ՛ ծարաւ, ջուր տուր նրան. այս անելով՝ կրակի կայծեր կը կուտակես նրա գլխին»: Թող մի՛ տուր, որ չարը յաղթի քեզ, այլ բարին՝ յաղթիր չարին:

ՄԱՐԴԻԿ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ՏԱԾԱՐ

(Ա Կորնթ. Գ 16—23)

Զգիտե՛ք, որ Աստուծոյ տաճար էք, եւ Աստուծոյ Հոգին է բնակուած ձեր մէջ: Եթէ մէկն Աստուծոյ տաճարն ապականուած է, Աստուած էլ նրան պիտի ապականի. որովհետեւ սուրբ է Աստուծոյ տաճարը, որը դուք էք:

Թող ոչ ոք ինքն իրեն չխաբի: Եթէ ձեզանից մէկը կարծում է, թէ այս աշխարհի իմաստունն է, յիմար թող լինի, որպէսզի իմաստուն դառնայ. որովհետեւ այս աշխարհի իմաստութիւնը յիմարութիւն է Աստուծոյ առաջ, քանզի գրուած է, թէ՛ ինքն է, որ բռնում է իմաստուններին իրենց խորագիտութեան մէջ: Եւ դարձեալ, թէ՛ Տէրը գիտէ իմաստունների մտածումները, որ ընդունայն են: Ուրեմն մարդկանցից ոչ ոք չպարծենայ, որովհետեւ ձերն է ամէն ինչ՝ թէ՛ Պօղոսը, թէ՛ Ապոլոսը, թէ՛ Կեփասը, թէ՛ աշխարհ, թէ՛ կեանք, թէ՛ մահ, թէ՛ այն բաները, որ կան, թէ՛ լինելիքները. ամէն ինչ ձերն է. դուք Քրիստոսին էք, իսկ Քրիստոս՝ Աստուծուն:

ՀՈԳԵՒՈՐ ՏԱՐԲԵՐ ԾՆՈՐՀՆԵՐ

(Ա. Կորնթ. ԺԲ 4—11)

Թէպէտես կան շնորհների զանազանություններ, բայց Հոգին նույնն է: Եթէ կան պաշտամունքի զանազանություններ, բայց Տէրը նույնն է: Եթէ կան ներգործությունների զանազանություններ, բայց նույնն է Աստուած, որ ներգործում է ամէն բան ամենքի մէջ: Բայց իրաքանչիւրին տրուած է Հոգու յայտնություն՝ իրաքանչիւրի օգուտի համար: Մէկին Հոգուց տրուած է իմաստութեան խօսք, միւսին՝ գիտութեան խօսք՝ ըստ նույն Հոգու, միւսին՝ հաւատ՝ նույն Հոգով, միւսին՝ բժշկումների շնորհ՝ նույն Հոգով, միւսին՝ զօրաւոր գործերի կարողություններ, միւսին՝ մարգարէություն, միւսին՝ հոգիները զանազանելու շնորհ, միւսին՝ լեզուների տեսակներ, միւսին՝ լեզուների թարգմանություն: Բայց այս ամէնը միեւնոյն Հոգին է ներգործում եւ բաժանում իրաքանչիւրին՝ ինչպէս որ կամենում է:

ՕՐՀՆԵՐԳ ՍԻՐՈՑ

(Ա. Կորնթ. ԺԳ 1—13)

Եթէ խօսեմ մարդկանց լեզուները և հրեշտակներինը, բայց սէր չունենամ, կը լինեմ ինչպէս մի պղինձ, որ հնչում է, կամ՝ ինչպէս ծնծղաներ, որ դողանցում են: Եւ եթէ մարգարէություն անելու շնորհ ունենամ եւ գիտեման բոլոր խորհուրդներն ու ամբողջ գիտությունը, եւ եթէ ունենամ ամբողջ հաւատը՝ մինչեւ իսկ լեռները տեղափոխելու, բայց սէր չունենամ, ոչինչ եմ: Եւ եթէ իմ ամբողջ ունեցումսքը տամ աղքատներին եւ իմ այս մարմինը մատնեմ այրման, բայց սէր չունենամ, ոչինչ չեմ շահի: Սէրը համբերող է, քաղցրանում է. սէրը չի նախանձում, չի ամբարտաւանանում, չի գոռոզանում, չի յանդգնում, իրենը չի փնտրում, չի գրգռում, չարը չի խորհում, անհրաւորեան վրայ չի ուրախանում, այլ ուրախանում է ճշմարտութեան վրայ. ամէն բանի դիմանում է, ամէն բանի հաւատում է, ամբողջովին յոյս է տածում, ամէն բանի համբերում: Սէրը երբեք չի սպառում. թէ մարգարէություններ են, պիտի չքանան, թէ լեզուներ՝ պիտի լռեն, թէ գիտություն՝ պիտի անցնի, քանզի շատից քիչը գիտենք և շատից քիչն ենք մարգարէանում: Իսկ երբ գալ կատարեալը, շատից քիչը կ'անհետանայ:

Մինչ երեխայ էի, խոսում էի ինչպէս երեխայ, խորհում էի ինչպէս երեխայ, կարծում էի ինչպէս երեխայ. իսկ երբ մարդ դարձայ, երեխայութեան բաները հեռու վանեցի: Այժմ տեսնում եմք՝ ինչպէս պատկերը հայելու մէջ, իսկ այն ժամանակ՝ դեմադէմ: Այժմ խելամիտ եմ փոքրիշատէ, իսկ այն ժամանակ կ'իմանամ, ինչպէս որ նա ճանաչեց ինձ:

Բայց արդ՝ մնում եմ հաւատ, յոյս, սէր. սրանք՝ երեքը. եւ սրանցից մեծը սէրն է:

ԽԱՉԻ ՊԱՐԾԱՆՔԸ

(Գաղ. Զ 14—18)

Սակայն քա լիցի, որ եւ պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչով, որով աշխարհը խաչուած է ինձ համար, եւ ես՝ աշխարհի, որովհետեւ ո՛չ թլփատությունն է մի բան եւ ո՛չ էլ՝ անթլփատությունը,

այլ՝ նոր արարած լինելը: Եւ թող խաղաղութիւն ու ողորմութիւն լինի բոլոր նրանց վրայ, որ համաձայն են այս կանոնին, ինչպէս նաև Աստուծոյ Իսրայէլի վրայ: Այսուհետեւ թող ոչ ոք ինձ նեղութիւն չտայ, որովհետեւ ես իմ մարմնի մէջ եմ կրում Քրիստոսի չարչարանքները: Եղբայրներ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը թող ձեր հոգու հետ լինի: Ամէն:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՈՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Եփես. Ե 21—33)

Հնազանդուեցէ՛ք միմեանց Քրիստոսի երկիրոյ: Կանայք իրենց մարդկանց թող հնազանդ լինեն, ինչպէս Տիրոջը, որովհետեւ մարդն է գլուխը կնոջ, ինչպէս որ Քրիստոս գլուխն է եկեղեցու. եւ ինքն է Փրկիչը այդ մարմնի: Եւ ինչպէս եկեղեցին հնազանդում է Քրիստոսին, նույնպէս եւ կանայք թող հնազանդուեն իրենց մարդկանց ամէն ինչում: Մարդի՛կ, սիրեցէ՛ք ձեր կանանց, ինչպէս որ Քրիստոս սիրեց եկեղեցին եւ իր անձը մատնեց նրա համար, որ այն սրբացնի աւազանի մաքրութեամբ՝ խօսքով, որպէսզի նա իր առաջ կանգնեցնի փառատոր եկեղեցին, որ ոչ մի արատ կամ աղտոնություն կամ նման բաներից ոչինչ չունենայ, այլ լինի սուրբ եւ անարատ: Նոյն ձեռով մարդիկ պարտատու են սիրել իրենց կանանց, ինչպէս իրենց մարմինները. ու սիրում է իր կնոջը, ինքն իրեն է սիրում. որովհետեւ ոչ ոք երբեք իր անձը չի առում, այլ սնուցանում եւ խնամում է այն, ինչպէս որ Քրիստոս՝ եկեղեցին. քանզի անդամներն ենք նրա մարմնի՝ նրա մարմնից եւ նրա ոսկորներից: Դրա համար մարդը պիտի թողնի իր հօրն ու մօրը եւ պիտի գնայ իր կնոջ ետեւից, եւ երկուսը պիտի լինեն մէկ մարմին: Այս խորհուրդը մեծ է. բայց ես ասում եմ Քրիստոսի եւ եկեղեցու վերաբերեալ: Եւ դուք էլ նույնպէս ամեն մէկդ նույնը արէք, որպէսզի իրաքանչիւր ոք իր կնոջն այնպէս սիրի, ինչպէս իր անձը, եւ կիւր երկնչի իր մարդուց:

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿԵԱՆՔ

(Կողոս. Գ 5—17)

Ապանեցէ՛ք ուրեմն ձեր երկրաւոր անդամները. հեռո՛ւ գցեցէք պոռնկություն, պղծություն, յոռի կրքեր, չարիքի ցանկություն եւ ազահություն, որ կուպաշտություն է: Դրա համար ըմբոստութեան որդիների վրայ կը գայ Աստուծոյ բարկութիւնը: Դուք էլ էիք մի ժամանակ ընթանում դրանց մէջ, երբ ապրում էիք մեղքերի մէջ: Այժմ դուք եւս հեռո՛ւ թօթափեցէք այդ բոլորը՝ բարկություն, գայլոյթ, չարություն, հայհոյություն և խեղկատակություն՝ ձեր բերաններից: Մի՛ ստէք միմեանց. մերկացել էք հին մարդուց իր գործերով եւ հագել էք նորը՝ նորոգուած գիտութեամբ, ըստ իր Արարչի պատկերի. այնտեղ չկայ հրեայ, ոչ էլ հեթանոս, թլփատություն եւ անթլփատություն, բարբարոս, սկիթացի, ծառայ, ազատ, այլ՝ Քրիստոս, որ ամէն ինչ է բոլորի մէջ: Որպէս Աստուծոյ ընտրեալներ, սրբեր և սիրելիներ, հագէ՛ք, ուրեմն, գույթ, ողորմություն, բաղքություն, խոնարհություն, հեզություն, համբերատարություն՝ հանդուրժելով միմեանց, ներելով միմեանց, եթէ մէկը միւսի դէմ գանգատ ունի. ինչպէս Աստուած Քրիստոսով ներեց ձեզ, նոյն ձեռով արէք և դուք: Եւ այս բոլորի վրայ՝ թող լինի սէրը, որ կապն է կատարելութեան: Եւ ձեր սրտերում



թող հաստատուի Քրիստոսի խաղաղությունը, որին եւ կոչուեցիք մէկ մարմնով. եւ գոհութիւն մատուցեցէք:

Թող Քրիստոսի խօսքը թնակուի ձեր մէջ առատապէս, որ ամենայն իմաստութեամբ ուսուցանէք եւ խրատէք միմեանց՝ սաղմոսներով եւ օրհներգութիւններով եւ հոգեւոր երգերով եւ երախտագիտութեամբ օրհնելով ձեր սրտերում Աստծուն: Եւ ամէն ինչ, որ անէք խօսքով եւ գործով, բոլորն արէք յանուն Տէր Յիսուսի, գոհութիւն մատուցեցէք նրանով Աստծուն եւ Հօրը:

ԸՆԴԴԷՄ ԾՈՒԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆԿԱՐԳՈՒԹԵԱՆ

(Բ ԹԵԱ. Գ Ե—15)

Եղբայրներ, պատուիրում եմ ձեզ յանուն մեր Տէր Յիսուս Քրիստոսի, որ դուք հեռու մնաք ամէն մի եղբորից, որ ծոյլ կեանքով է ապրում եւ ոչ ըստ այն ասանդութեան, որն ընդունեցիք մեզմից. որովհետեւ ինքներդ գիտէք, թէ որչափ դուք պէտք է նմանուէք մեզ, քանի որ ձեզ մօտ երբէք չծուլացանք եւ ոչ որի հացը ձրի չկերանք, այլ ջանքով եւ վաստակով գօր ու գիշեր աշխատում էինք՝ ձեզմից ոչ մէկի վրայ ծանրութիւն չլինելու համար. ոչ թէ նրա համար, որ իշխանութիւն չունէինք, այլ որպէսզի մենք մեզ օրինակ դարձնենք ձեզ՝ մեզ նմանուելու համար. քանի դեռ ձեզ մօտ էինք, այս էինք պատուիրում ձեզ. թէ՛ ով չի ուզում աշխատել, թող չուտի էլ: Արդ՝ ձեզանից ոմանց մասին լսում ենք, թէ անկարգ կեանքով են ապրում, որեւէ աշխատանք չեն անում, այլ ծոյլ-ծոյլ շրջում են՝ դատարկ բաներով հետաքրքրուելով: Այդպիսիներին պատուիրում ենք և յորդորում Տէր Յիսուս Քրիստոսով, որ աշխատեն հանդարտութեամբ և իրենց հացն ուտեն: Իսկ դուք, եղբայրներ, մի՛ յոգնէք բարիք անելուց: Իսկ եթէ որեւէ մէկը չհնազանդուի այս թղթի մէջ մեր ասած խօսքին, նշեցէ՛ք նրան եւ մի՛ յարաբերուէք նրա հետ, որպէսզի ամօթով մնայ: Բայց նրան որպէս թշնամի մի՛ համարէք, այլ խրատեցէ՛ք որպէս եղբայր:

